ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 110-Ա

«15» դեկտեմբերի 2023 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի 78-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 14-ի՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում (բնակավայր՝ Արդենիս) քաղաքացի Ռաֆիկ Վոլոդյայի Մանուկյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված եվ Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Ամասիա Համայնքի սեփականությունը համարված բնակավայրերի նպատակային նշանակության շինությունները (բնակելի տուն, անասնաշենք) եվ նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով կառուցապատողին վաճառելու համար համաձայնություն տալու մասին » թիվ 78-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ

«1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը

համարված 156,4 քառակուսի մետր բնակավայրերի նպատակային նշանակության շինությունը (գործառնական նշանակությունը՝ բնակելի տուն, անասնաշենք) և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-017-0004-0010 կադաստրային ծակագրով 0,12431 հեկտար մակերեսով հողամասը (հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք, գյուղ Արդենիս 7-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 5) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով 159800 (հարյուր հիսունինը հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ հողամասի և 251,491 (երկու հարյուր հիսունմեկ հազար չորս հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ շինության համար, ընդհանուր 411291 (չորս հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, արժեքով վաճառել կառուցապատող քաղաքացի՝ Ռաֆիկ Վոլոդյայի Մանուկյանին /նույնականացման քարտ՝ 010574770, տրված՝ 021 կողմից, 30 հուլիսի 2018 թվականին, հաշվառման հասցե՝ գյուղ Արդենիս, 4-րդ փողոց, տուն 4/:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 8 *Դեմ՝ 0* *Ձեռնպահ՝ 0*

Հարությունյան Ջ.
Ղուկասյան Ա.
Ախցխեցյան Է.
Աբրահամյան Ն.
Մարդոյան Գ.
Զաքարյան Հ.
Արսենյան Ջ.
Գևորգյան Հ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«15» դեկտեմբերի 2023 թվական
գյուղ Ամասիա